ԴԱՎԻԹ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
ՀՊՏՀ ՄՏՀ ամբիոնի պրոֆեսոր,
տնտեսագիտության դոկտոր

ՏԱԹԵՎԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՊՏՀ ՄՏՀ ամբիոնի ասպիրանտ

ԱՇԽԱՏՈՒԺԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Հոդվածում գնահատվել է աշխատուժի միջազգային միգրացիայի ազդեցությունը համաշխարհային տնտեսության վրա: Մասնավորապես՝ հաշվարկվել է համաշխարհային տնտեսական աճի, դրամական փոխանցումների ու զարգացման նպատակով ստացված պաշտոնական օգնությունների միջև կոռելյացիոն կապը, ինչպես նաև դրամական փոխանցումների ու 15 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց գրագիտության մակարդակի միջև հարաբերակցությունը: Ստացվել է ուժեղ կոռելյացիոն կապ երկու գործոնների միջև, ըստ որի մեծահասակների շրջանում գրագիտության մակարդակի աճը հանգեցնում է միգրացիոն հոսքերի ավելացմանը:

Հիմնաբառեր. *աշխատուժի միջազգային միգրացիա, դրամական փոխանցումներ, զարգացման նպատակով ստացված պաշտոնական օգնություններ, կոռելյացիոն կապ, գրագիտության մակարդակ, ՕՈՒՆ*
JEL: F22, F60, F66

Ժամանակակից փոխկապակցված աշխարհում արդիական մարտահրավեր են միջազգային միգրացիայի աճող տեմպերն ու ընդգրկման լայն շրջանակը: Համաձայն ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի վիճակագրական տվյալների՝ 2017 թվականին միջազգային միգրանտների թիվը հասել է մոտ 258 մլն-ի[1], ինչը աշխարհի բնակչության 3.5%-ն է: Այսինքն՝ կա-

[1] Տե՛ս http://www.un.org/en/development/desa/population/migration/data/estimates2/estimates17.shtml

րող ենք ենթադրել, որ աշխարհի բնակչության 3.5%-ն այս կամ այն չափով համաշխարհային հասարակության խոցելի խմբերից մեկն է: Ընդունող երկրում տնտեսական տատանումների պատճառով միգրանտները հաճախ առաջինն են կորցնում աշխատանքը: Նրանք շատ հաճախ այստեղ հանդիպում են այնպիսի խնդիրների, ինչպիսիք են աշխատանքային իրավունքների ոտնահարումը, ցածր վարձատրությունը, մարդու իրավունքների խախտումը, բռնությունն ու խտրականությունը: Բարձր եկամուտ ունեցող երկրների տնտեսությունները ներկայումս աչքի են ընկնում աշխատանքի շուկայի հստակ հատվածավորմամբ: Տեղացիները սովորաբար խուսափում են քիչ վարձատրվող, անապահով և ոչ հաճելի աշխատանքներից, որոնք գերակշռում են միգրանտների շրջանում: Սրանք տնտեսագիտական գրականության մեջ բնորոշվում են «3D-աշխատանք» անվանմամբ՝ կեղտոտ, վտանգավոր և/կամ դժվար (dirty, dangerous, or difficult): Սրա հետևանքով միգրացիան դառնում է մարտահրավեր արդեն ոչ թե ընդունող երկրի, այլ հենց միգրանտի համար:

ՄԱԿ-ի[2] և Համաշխարհային բանկի[3] վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2000–2016 թթ. միջազգային միգրանտների կեսից ավելին կամ 165 մլն միգրանտ ապրում էր բարձր եկամուտ ունեցող երկրներում, ինչը բավական օրինաչափ է, քանի որ միգրացիայի հիմնական ձգողության կենտրոնները տնտեսապես զարգացած երկրներն են: Միջազգային միգրանտների 36%-ը կամ 92 մլն մարդ ապրում է միջին և ցածր եկամուտ ունեցող երկրներում: 2000 թվականի համեմատությամբ, բարձր եկամուտ ունեցող երկրներում ապրող միգրանտների թիվն ավելացել է 5.8%-ային կետով, իսկ միջին և ցածր եկամուտ ունեցող երկրներում միջազգային միգրանտների թիվը բավական նվազել է:

Համաշխարհային տնտեսության վրա աշխատուժի միջազգային միգրացիայի ազդեցության գնահատման կարևորագույն գործիքներից մեկը դրամական փոխանցումներն են, որոնք ուղղակիորեն անդրադառնում են տնտեսական աճի վրա՝ սպառման, խնայողությունների և ներդրումների առումով իրենց դրական ազդեցությամբ:

Դրամական փոխանցումների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է բավական հետաքրքիր միտում. 2015 թ. համեմատությամբ, 2016 թվականին դրամական փոխանցումները դեպի զարգացող երկրներ նվազել են 2.4%-ով: Միայն դեպի Հնդկաստան դրամական փոխանցումները 2016 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, նվազել են 8.9%-ով: Սա կարելի է բացատրել նավթի համաշխարհային շուկայում գների անկմամբ, Պարսից ծոցի համագործակցության խորհրդի երկրներում և Ռուսաստանի Դաշնությունում տնտեսական աճի ցածր ցուցանիշներով: Եվրոպայում տնտեսական վատթարացումը, ինչպես նաև ԱՄՆ դոլարի համեմատությամբ եվրոյի, ֆունտ ստեռլինգի և ռուբլու դիրքերի թուլացումը, համաշխարհային արտահանման ծավալների անկումը գործոններ են, որոնք ուղղակի կամ անուղղակի ազդել են դրամական փոխանցումների ծավալների վրա: Վերջերս բարձր եկամուտ ունեցող մի շարք երկրներում դրամական փոխանցումների նկատմամբ հարկային մեխանիզմներ են կիրառվում՝ եկամուտների ավելացման և չփաստաթղթավորված միգրացիայի դեմ պայքարի համար:

---

[2] Տե՛ս նույն տեղը:
[3] Տե՛ս https://data.worldbank.org/indicator/BX.TRF.PWKR.CD.DT

Բահրեյնը, Քուվեյթը, Օմանը, Սաուդյան Արաբիան, Միացյալ Նահանգները և Արաբական Միացյալ Էմիրությունները այդ երկրների ցանկում են[4]: Վերջին հաշվով, հատկապես բարձր եկամուտ ունեցող երկրներում հակամիգրացիոն տրամադրվածությունը հանգեցրել է օտարերկրյա աշխատուժի նկատմամբ պահանջարկի նվազմանը, ինչը հատկապես ֆորմալ ուղիներով դրամական փոխանցումների ծավալների նվազման պատճառ է դարձել:

2008 թվականին Բ.Ֆայիսան և Ք.Նսիահը ուսումնասիրեցին և դրական կապ արձանագրեցին տնտեսական աճի և դրամական փոխանցումների միջև Աֆրիկայի, Ասիայի և Լատինական Ամերիկայի ու Կարիբյան ավազանի 64 տարբեր երկրների վիճակագրական տվյալների հիման վրա՝ 1987–2007 թթ.[4]:

Գծապատկեր 1-ում ներկայացված են 1970–2016 թթ. համաշխարհային բանկի վիճակագրական տվյալները[6] համաշխարհային տնտեսական աճի, դրամական փոխանցումների ու զարգացման նպատակով ստացված պաշտոնական օգնությունների վերաբերյալ:



Գծապատկեր 1. *Կոռելյացիոն կապը զարգացման նպատակով ստացված պաշտոնական օգնությունների, դրամական փոխանցումների և տնտեսական աճի միջև*

Զարգացման նպատակով ստացված պաշտոնական օգնությունների ծավալների ընդլայնումը պետք է հակադարձ կախվածություն ունենա դրամական փոխանցումներից, իսկ երկու ցուցանիշները կախվածություն դրսևորեն տնտեսական աճի նկատմամբ: Իրականացված կոռելյացիոն վերլու-

[4] Տե՛ս Mohapatra Sanket, Moreno-Dodson Blanca, Ratha Dilip, Migration, taxation, and inequality (English). Economic premise; no. 80. Washington, DC: World Bank, 2012. http://documents.worldbank.org/curated/en/257461468337203140/Migration-taxation-and-inequality

[4] Տե՛ս The Impact of Remittances on Economic Growth and Development in Africa, Bichaka Fayissa, Middle Tennessee State University Christian Nsiah, Black Hills State University. http://citeseerx.ist.psu.edu/viewdoc/download?doi=10.1.1.529.8906&rep=rep1&type=pdf

[6] Տե՛ս https://data.worldbank.org/indicator

ծությունը ցույց տվեց, որ զարգացման նպատակով ստացված պաշտոնական օգնությունների և դրամական փոխանցումների միջև կապը 0.9 է: Միևնույն ժամանակ, տնտեսական աճի և դրամական փոխանցումների միջև կապը –0.20 է, իսկ տնտեսական աճի և զարգացման նպատակով ստացված պաշտոնական օգնությունների միջև՝ –0.26:

Գծապատկեր 2-ը ցույց է տալիս, որ ստացված դրամական փոխանցումները դիտարկվող ժամանակաշրջանում աճել են տարեկան միջինը 14.4%-ով, իսկ զարգացման նպատակով ստացված դրամական օգնությունները՝ 7.7%-ով: 1999–2008 թթ. դրամական փոխանցումները տարեկան կայուն աճի միտում են դրսևորել: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով 2009 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, ցուցանիշը անկում է ապրել 6.21%-ով: Վերջին տարիներին համաշխարհային տնտեսական աճը թուլացել է, իսկ 2016 թվականին դրամական փոխանցումները նվազել են 1.43%-ով: Սա կարելի է հիմնավորել նաև միջազգային միգրանտների տեսակարար կշռում փախստականների և ապաստան հայցողների թվի մեծացմամբ: Իսկ արդեն 2017 թ.դրամական փոխանցումներն աճել են 3.86%-ով՝ կազմելով 596 տրլն ԱՄՆ դոլար:



Գծապատկեր 2. ***Զարգացման նպատակով ստացված դրամական օգնությունները (ԱՄՆ դոլար), դրամական փոխանցումները (ԱՄՆ դոլար) և տնտեսական աճը (%)*** [7]

Աշխատուժի միջազգային միգրացիայի դրդապատճառների վերլուծության բավական հետաքրքիր մոտեցում է ներկայացրել Հ. Բագրատյանը «Մեգաէկոնոմիկա և գլոբալ տնտեսական խնդիրներ» գրքում: 21-րդ դարի սկզբին աշխարհի բնակչության 90%-ը դարձավ գրագետ: Մի շարք երկրների տնտեսություններ ի վիճակի չեն կլանելու գրագիտության այս մակարդակը, ինչը հանգեցրեց հատկապես երիտասարդների միգրացիոն հոսքերի՝ դեպի աշխատանքային ռեսուրսների բացասական մնացորդ ունեցող երկրներ[8]:

[7] Գծապատկերը կազմվել է համաշխարհային բանկի տվյալների հիման վրա. https://data.worldbank.org/indicator

[8] Տե՛ս **Багратян Г.,** Мегаэкономика и глобальные экономические проблемы: Учебно-методическое пособие. Ер., Издательство РАУ, 2013, էջ 31:



Գծապատկեր 3. *Դրամական փոխանցումների (ԱՄՆ դոլար) ու գրագիտության մակարդակի (15 տարեկան և բարձր տարիքի անձանց) միջև կոռելյացիոն կապը*

Այս մոտեցումը հիմնավորելու համար կատարել ենք կոռելյացիոն վերլուծություն դրամական փոխանցումների ու 15 տարեկան և բարձր տարիքի անձանց գրագիտության մակարդակի միջև: Որպես փոփոխական ընտրվել են դրամական փոխանցումները, քանի որ միջազգային միգրացիոն հոսքերի վիճակագրական ցուցանիշները ներկայացվում են 5 տարի պարբերականությամբ, ինչը տնտեսաչափական վերլուծության տեսակետից նպատակահարմար չէ: Փիրսոնի կոռելյացիոն վերլուծությունը ցույց տվեց, որ երկու փոփոխականների միջև կապը՝ R=0.85 է, ինչը բավական ուժեղ է: Գծապատկեր 3-ում հստակ ներկայացված է ուժեղ կոռելյացիոն կապ երկու գործոնների միջև, հետևաբար՝ մեծահասակների շրջանում գրագիտության մակարդակի աճը հանգեցնում է միգրացիոն հոսքերի ավելացման:

Ինչպես երևում է գծապատկեր 4-ից, 1991–2016 թթ. զբաղվածության մակարդակն աշխարհում կազմել է միջինը 60.6%: Ընդ որում, 1991 թվականի համեմատությամբ զբաղվածության մակարդակը 2016 թվականին նվազել է 3.2%-ային կետով, և ընդհանուր միտումը նվազող է: Սրա զուգակցումը հիմնականում աճող տեմպով միջազգային միգրացիոն հոսքերի և դրամական փոխանցումների հետ ցույց է տալիս, որ համաշխարհային տնտեսությունում սրվում է մարդկանց աշխատանքով ապահովելու խնդիրը:



Գծապատկեր 4. ***ՕՈՒՆ-ի զուտ ներհոսքը (ԱՄՆ դոլար), դրամական փոխանցումները (ԱՄՆ դոլար) և զբաղվածության մակարդակը (%) 1991–2016 թթ.***

Մենք կատարել ենք տնտեսաչափական վերլուծություն՝ բացահայտելու համար ՕՈՒՆ-ի զուտ ներհոսքի և դրամական փոխանցումների միջև կապը: Վերլուծության արդյունքում պարզվել է, որ ցուցանիշների միջև գոյություն ունի ուժեղ կապ (R=0.86): Գծապատկերը ևս ցույց է տալիս այս ցուցանիշների միջև դրական կապը, թեև կոռելյացիայի նշանակալիությունը 0.01 է: Իհարկե, դրամական փոխանցումների և ՕՈՒՆ-ի միջև կապի առկայությունը տնտեսագիտորեն կարող է խաբուսիկ լինել, քանի որ միգրացիայի վրա ազդող գործոնները բազմատեսակ են: Օրինակ՝ շվեդացիները պատմականորեն հակում ունեն տեղաշարժվելու Մինեապոլիս, քանի որ այնտեղի կլիման շատ նման է Շվեդիայի կլիմային, ինչը կարող է նպաստել անգամ փոխադարձ առևտրի և ներդրումների ծավալների աճին[9]:

Բայց և այնպես, ՕՈՒՆ-ի ներգրավման և միգրացիոն հոսքերի միջև մի շարք կապեր կան: Առաջին հերթին՝ ՕՈՒՆ-ի ներգրավման լավագույն գործիքներից մեկը վստահությունն է[10]: Իսկ ընդունող երկրում միգրանտները ձևավորում են օղակ, որն ապահովում է ճանաչելիություն, վստահություն և հուսալիություն ծագման երկրի համար, ինչն էլ, իր հերթին, հանգեցնում է ՕՈՒՆ-ի աճին:

[9] Տե՛ս The effect of migration on foreign direct investment, Konrad Burchardi, Thomas Chaney, Tarek Hassan 12 November 2016. https://voxeu.org/article/effect-migration-foreign-direct-investment

[10] Տե՛ս **Zingales L., Guiso L. & Sapienza P.,** Cultural biases in economic exchange?, Quarterly Journal of Economics 124(3), 2009, էջ 1095–1131:



Գծապատկեր 5. *Զբաղվածության մակարդակի, ՕՈՒՆ-ի զուտ ներհոսքի և դրամական փոխանցումների միջև կապը*

Զբաղվածության մակարդակի և դրամական փոխանցումների միջև առկա է ուժեղ բացասական կապ (R=-0.948): Դրանց զուգակցումը ցույց է տալիս, որ համաշխարհային տնտեսությունում սրվում է մարդկանց աշխատանքով ապահովելու խնդիրը: Հետաքրքիր է նաև, որ, ըստ գծապատկերի վերլուծության, բացասական է նաև ՕՈՒՆ-ի և զբաղվածության մակարդակի միջև կապը, մինչդեռ օտարերկրյա ուղղակի ներդրումները համարվում են աշխատատեղեր ստեղծող գործիքներ: Բացի այդ, ՕՈՒՆ-ի և զբաղվածության մակարդակի դրական կապի արդյունքում առաջինները հնարավոր կլիներ դիտարկել որպես միգրացիան կանխող լծակ:

Օգտագործված գրականություն

1. Багратян Г., Мегаэкономика и глобальные экономические проблемы: Учебно-методическое пособие., Ер.: Изд. РАУ, 2013.
2. Mohapatra Sanket, Moreno-Dodson Blanca, Ratha Dilip, Migration, taxation, and inequality (English). Economic premise; no. 80. Washington, DC: World Bank, 2012.
3. The Impact of Remittances on Economic Growth and Development in Africa, Bichaka Fayissa, Middle Tennessee State University Christian Nsiah, Black Hills State University.
4. The effect of migration on foreign direct investment, Konrad Burchardi, Thomas Chaney, Tarek Hassan 12 November 2016.
5. Zingales L., Guiso L. & Sapienza P., Cultural biases in economic exchange?, Quarterly Journal of Economics 124(3), 2009.
6. http://www.un.org/en/
7. https://data.worldbank.org

ДАВИД АХВЕРДЯН
Профессор кафедры МЭО АГЭУ,
доктор экономических наук

ТАТЕВИК ВАРДАНЯН
Аспирант кафедры МЭО АГЭУ

Влияние международной трудовой миграции на мировую экономику. – В статье дается оценка влияния международной трудовой миграции на мировую экономику. В частности, была рассчитана взаимосвязь между глобальным экономическим ростом, трансфертами, и официальной помощи в целях развития, а также корреляционная связь между денежными переводами и уровнем грамотности в возрасте 15 лет и старше. Между двумя факторами существует сильная корреляция, и оказывается, что буквально растущая грамотность среди взрослого населения приводит к увеличению миграционных потоков.

Ключевые слова: *международная трудовая миграция, денежные переводы, официальная помощь в целях развития, корреляционная связь, уровень грамотности, ПИИ.*
JEL: F22, F60, F66

DAVIT HAKHVERDYAN
Professor at the Chair of IER at ASUE,
Doctor of Economics

TATEVIK VARDANYAN
Post-graduate at the Chair of IER at ASUE

Impact of International Labor Migration on the World Economy. – The article assesses the impact of international labor migration on the world economy. In particular, the correlation between global economic growth, transfers, and official development assistance has been calculated, as well as the correlation between remittances and the literacy rate at the age of 15 years and over. Between the two factors there is a strong correlation, and it turns out that literally growing literacy among the adult population leads to an increase in migration flows.

Key words: *international labour migration, remittances, official development assistance, correlation linkage, literacy rate, FDI.*
JEL: F22, F60, F66